ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՏՄԱԿ 2026-1

Ք. Երևան «5» փետրվար 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ ը, ի դեմս տնօրեն Լիլիթ Մնացականյանի, (այսուհետև՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետև՝ որոշում), որոշման 1193. «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» բյուջետային ծրագրի «11001. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 311321900 (Երեք հարյուր տասնմեկ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել

պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. պայմանագրի 2.4.4-րդ կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն պայմանագրի 1.2-րդ կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել գործող իրավական ակտերի, պետական մարմնի կողմից հաստատված կամ տրամադրված մեթոդական ցուցումների, հրահանգների պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ ՀՀ աշխատաքային օրենսգրքով սահմանված սահմանված կարգով,

2.4.12. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2026 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.13. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ պայմանագրի 2.4-րդ կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների համար և չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 5-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2-րդ և 5.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք. Երևան, Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005429	Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02661245
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Հ. Հակոբյան	Լ. Մնացականյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
2026 թ. փետրվարի 5-ին կնքված
N **ՏՄԱԿ 2026-1** պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1193. «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» բյուջետային ծրագրի
«11001. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ»

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Համառոտ բովանդակությունը	Գնահատման ցուցանիշներ, չափման միավոր	Ակնկալվող արդյունք և վերջնաժամկետ			
				Եռ 1 31.03.2026թ.	Եռ 2 30.06.2026թ	Եռ 3 30.09.2026թ.	Եռ 4 30.12.2026թ.
1.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատում	Տարածքային մակարդակի գնահատման ԿԱՊԿ եզրակացության բողոքարկում	Հնարավոր **բողոքարկումների թիվը, հատ**	9	27	39	57
		Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացին մասնակցություն, աջակցություն նոր գործիքակազմի կիրառմանը (տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետների կարողությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ)	ԿԱՊԿ գնահատում անցած **երեխաների թիվը, անձ**	13	31	37	55
		ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում գտնվող իրավախախտում կատարած անձանց հոգեբանական կարիքի գնահատում	Գնահատում անցած **անձանց թիվը, անձ**	0	0	36	36
2.	Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում՝ նախադպրոցական տարիքի մանկավարժահոգեբանական	Մանկավարժահոգեբանական ծառայություններից օգտվող **երեխաների թիվը, անձ**[1]	26	26	26	26

[1] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճողական կարգով:

		աջակցության կարիք ունեցող երեխաներին:					
3.	Բողոքների, ահազանգերի կամ դիմումների հիման վրա դեպքերի ուսումնասիրություն ուսումնական հաստատություններում	Բռնության, բուլինգի, սոցիալապես ոչ ընդունելի վարքային դրսևորումների և խնդրահարույց դեպքերի վերաբերյալ դիմումների ընդունում, դրանց ուսումնասիրություն, փաստերի հավաքագրում և փաստաթղթավորում, ինչպես նաև ուսումնասիրման արդյունքում ստացված տվյալների վերլուծություն և խնդրի համալիր լուծման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացում:	**Դեպքերի թիվը, հատ**	12	24	36	48
4.	Ուսումնական հաստատություններում մենթորական աջակցության տրամադրում, մասնագիտական աջակցության համակարգում՝ բռնության, բուլինգի, խնդրահարույց վարքային դրսևորումների համալիր լուծման նպատակով	Դեպքերի լուծման գործընթացում իրականացված միջամտության արդյունավետության շարունակական վերահսկում, համակարգում, մենթորական աջակցության տրամադրում՝ համապատասխան արձագանքող կամ ուղղորդող քայլերի ձեռնարկմամբ:	**Մենթորական աջակցություն ստացած անձանց թիվ**	10	25	35	50
5.	Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ	Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների և դպրոցների մասնագետների և մանկավարժների կարողությունների զարգացման/ վերապատատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում ՀՀ բոլոր մարզերում՝ երեխաների ԿԱՊԿ գնահատման գործիքակազմի կիրառման, մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման և անհատական ուսուցման պլանի վերաբերյալ:	**Վերապատրաստումների թիվը, հատ**	80	150	180	248
			Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվելու են վերապատրաստումներ, հատ	326	905	1044	1228
			ՏՄԱԿ-ների թիվը, որտեղ իրականացվելու են վերապատրաստումներ, հատ[2]	25	25	25	25
			Վերապատրաստվող անձանց թիվը, անձ	1181	2126	2667	3664

[2] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճողական կարգով:

5.	Խորհրդատվություն	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին, սովորողների ծնողներին՝ խորհրդատվությունների ձևաչափով՝ ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով:	**Խորհրդատվությունների թիվ, հատ**	682	1246	1699	2441
			Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվելու են խորհրդատվություններ, հատ	146	298	368	579
			ՏՄԱԿ-ների[3] թիվը, որտեղ իրականացվելու են խորհրդատվություններ, հատ	25	25	25	25
			Խորհրդատվություններ ստացած անձանց թիվը, անձ (մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, ՄՀ աջակցության թիմ)	1564	3106	3929	6067
6.	Մշտադիտարկում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ԿԱՊԿ գնահատման գործընթացների մշտադիտարկում ՀՀ բոլոր մարզերում: Ամփոփ վիճակագրական տվյալների ներկայացում՝ օգտվելով ԿԳՆ ԿՏԱԿ-ի կողմից վարվող տվյալների բազայից՝ ըստ մարզերի, սեռատարիքային կազմի, ուսումնական հաստատության, երեխայի կարիքի տեսակի և ծանրության աստիճանի:	**Մշտադիտարկումների թիվը, հատ**	159	340	482	680
			Ուսումնական հաստատությունների թիվը, որտեղ իրականացվել են մշտադիտարկումներ, հատ	125	269	325	538
			ՏՄԱԿ-ների[4] թիվը, որտեղ իրականացվել են մշտադիտարկումներ, հատ	25	25	25	25
7.	Կրթության կազմակերպման օժանդակող ուսումնամեթոդական նյութերի բովանդակային մշակում, հրատարակում և փորձաքննություն	Կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրապարակում և ձեռքբերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ	Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացին օժանդակելու նպատակով մշակված և հրապարակված **ուսումնական ու մեթոդական գրականության թիվը, հատ**	5	13	19	24

[3] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճողական կարգով:

[4] Այս կետի ցուցանիշները ներկայացված չեն աճողական կարգով:

		աշխատող մանկավարժների, մասնագետների և ծնողների համար (այդ թվում՝ դիդակտիկ պարագաներ, խաղեր, զարգացնող ու աշխատանքային նյութեր):					
		ՀՄԿ-ի և ՏՄԱԿ-ների կամ ոլորտի այլ կազմակերպությունների մասնագետների կողմից մշակված բովանդակային նյութերի փորձաքննություն	**Փորձաքննությունների թիվը, հատ**	10	22	26	36
8.	Իրազեկում և փորձի փոխանակում	Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման հետ կապված Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կամ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների հանրայնացում և լուսաբանման ապահովում (կլոր սեղան, հանդիպումներ, քննարկումներ, հրապարակումներ):	**Միջոցառումների, իրազեկող գրառումների թիվը, հատ**	49	103	153	210
9.	Հանրակրթական դպրոցների մանկավարժների կարողությունների զարգացում	Ծրագրում ընդգրկված մենթոր-վերապատրաստողների կողմից Երևանի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի, Արմավիրի, Արարատի, Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերի հանրակրթական դպրոցների մանկավարժների կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների իրականացում:	**Մենթոր-վերպատրաստողների թիվ, անձ**	60	70	140	140
			Ծրագրին մասնակցած դպրոցների թիվ, հատ	60	92	160	190
			Վերապատրաստված ուսուցիչների թիվ, անձ				
10.	Ծրագրի իրականացման արդունքների գնահատում և մշտադիտարկում	Ծրագրի ազդեցության և արդյունքների գնահատման նպատակով ծրագրի մշտադիտարկողների կողմից ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների մշտադիտարկում	**Մշտադիտարկողների թիվ, մարդ**	7	7	8	8
11.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող	Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացին	0	0	1	1

	օգնականների համար Ներառող դասավանդման վերաբերյալ ձեռնարկի մշակում և հրատարակում	երեխաների հետ աշխատող մանկավարժների և մասնագետների համար արդյունավետ ներառական կրթության կազմակերպման համար նախատեսված ձեռնարկի մշակում և հրապարակում:	օժանդակելու նպատակով մշակված և հրապարակված **ուսումնական ու մեթոդական գրականության թիվը, հատ**				
Ընդամենը պահանջվող գումարը (դրամ)					**311321900**		

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005429
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

Հ. Հակոբյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երևան, Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02661245

Տնօրեն

Լ. Մնացականյան
(ստորագրություն)
L.S.